

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանը հայտարարում է մրցույթներ՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ենթակայության առողջապահական հետևյալ պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմինների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար

ՀՀ Գեղարքունիքի մարզի <<Վաղաշենի ԱԱՊԿ>>, <<Ծակքարի ԱԱՊԿ>>, <<Ծովագյուղի ԱԱՊԿ>>, <<Լճաշենի ԱԱՊԿ>>, <<Վարդենիկի ԱԿ>> պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար պահանջվում է՝

1. բարձրագույն բժշկական կրթություն և հետբուհական կրթություն ներքին հիվանդություններ /թերապիա/, կամ մանկաբուժություն կամ ընտանեկան բժշկություն մասնագիտությամբ.

2. առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ բժշկական ոլորտի ձեռնարկատիրական կամ առողջապահական համակարգի կառավարման ոլորտի առնվազն 2 տարվա ստաժ.

3. իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն /այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, բաժնետիրական ընկերությունների, աշխատանքային, առողջապահության ոլորտի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրություն և այլ իրավական ակտեր/.

4. կազմակերպության զարգացման ծրագրեր մշակելու կարողություն.

5. աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություն. ներառյալ՝

ա) ստորաբաժանումների աշխատանքների կազմակերպման.

բ) անձնակազմի աշխատանքի ընդունման, ազատման և վերապատրաստման գործընթացների կազմակերպման.

գ) աշխատանքների բաշխման.

դ) կարգապահական պատասխանատվության.

ե) խրախուսանքի միջոցների կիրառման.

6. համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

7. ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն, ներառյալ՝

գույքի, ֆինանսական միջոցների տնօրինման և գործարքներ կնքելու կարողություններ.

8. չի լրացել թեկնածուի 65 տարին

9. բժշկական ծառայությունների պատշաճ մատուցման, ինչպես նաև անձնակազմի կողմից ռեսուրսների արդյունավետ օգտագործման և լրացուցիչ աշխատողների, սարքավորումների և ծառայությունների անհրաժեշտության գնահատում.

10. օտար լեզվի իմացություն.

11. Մրցույթները կանցկացվեն

- | | | | |
|--------------------------|--------|-------------------------|----------------------|
| 1.<<Վաղաշենի ԱԱՊԿ>> ՊՈԱԿ | 2019թ. | հոկտեմբերի 15-ին, ժամը` | 11 ⁰⁰ -ին |
| 2.<<Ծակքարի ԱԱՊԿ>> ՊՈԱԿ | 2019թ. | հոկտեմբերի 16-ին, ժամը` | 11 ⁰⁰ -ին |
| 3.<<Ծովագյուղի ԲԱ>> ՊՈԱԿ | 2019թ. | հոկտեմբերի 17-ին, ժամը` | 11 ⁰⁰ -ին |
| 4.<<Լճաշենի ԱԱՊԿ>> ՊՈԱԿ | 2019թ. | հոկտեմբերի 18-ին, ժամը` | 11 ⁰⁰ -ին |
| 5.<<Վարդենիկի ԱԿ>> ՊՈԱԿ | 2019թ. | հոկտեմբերի 22-ին, ժամը` | 11 ⁰⁰ -ին |

12. Մրցույթներին մասնակցելու համար քաղաքացիները ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան են ներկայացնում`

1) դիմում.

2) մեկ լուսանկար 3 x 4 չափի.

3) քաղվածք` աշխատանքային գրքույկից.

4) ինքնակենսագրություն.

5) անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի /արական սեռի անձինք` նաև գինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի/ պատճենները.

6) քաղաքացու ցանկությամբ` հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ` դրանց առկայության դեպքում.

7) բնութագիր` վերջին աշխատավայրից /եթե կազմակերպությունը չի լուծարվել/.

8) կազմակերպության զարգացման նախնական ծրագիրը /ներկայացվում է մրցույթի օրվանից առնվազն երեք օր առաջ/, որը ներառում է կազմակերպության զարգացման և բարեփոխման, ինչպես նաև կազմակերպության մասնագիտական, ֆինանսատնտեսական և կառավարման ոլորտի զարգացման հիմնական ուղենիշները, կազմակերպության կառուցվածքի և գործունեության բարեփոխմանն ուղղված առաջարկությունները: Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի հետ աշխատանքային պայմանագրի կնքման դեպքում դրանում նախատեսված ժամկետում կազմակերպության զարգացման նախնական ծրագրի հիման վրա նրա կողմից ներկայացվում է կազմակերպության զարգացման հիմնական ծրագիրը, որը ներառում է բաժիններ կազմակերպության մասնագիտական, ֆինանսատնտեսական և կառավարման ոլորտի զարգացմանն ուղղված միջոցառումների և դրանց իրականացման ժամանակացույցի վերաբերյալ:

13. Քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ` ներկայացնելով անձնագրի և պահանջվող փաստաթղթերի բնօրինակները:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր, ժամը 9³⁰-12³⁰, բացի շաբաթ, կիրակի և տոն օրերից:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2019 թվականի սեպտեմբերի 13-ը:

Մրցույթները կկայանան Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի շենքում /Կենտրոնական հրապարակ 7/:

Մրցույթներին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկությունների, ինչպես նաև հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժին, հեռ.՝ 060650626: